«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 96 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT07-2411-C (1212)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 7-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	12 դեկտեմբերի 2024 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 / Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	18:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Սարգիս Բաղալյան - ՀԽ նախագահ (առկա),
Արտավազդ Մինասյան (առցանց),
Դավիթ Փախչանյան (առցանց),
Լիլիթ Պետրոսյան (առկա),
Լևոն Բուդաղյան (առցանց),
Եվա Արևիկյան (առցանց),
Իրինա Գեյկո (առցանց),
Տիգրան Բունիաթյան (առցանց),
Ռաֆֆի Ֆըսթըգճյան (առցանց):

Նիստին չեն մասնակցել՝
Աշոտ Մկրտչյան,
Տիգրան Հարությունյան:

Արտավազդ Մինասյանը մասնակցել է նիստի 1-ին, 2-րդ ,3-րդ, 4-րդ և 5-րդ հարցերի քննարկմանը:
Լևոն Բուդաղյանը չի մասնակցել նիստի 6-ին, 7-րդ և 8-րդ հարցերի քննարկմանը:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամներից ինը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա):

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Դավիթ Սահակյան (Գործադիր տնօրեն: Առկա),
Աննա Ակոպյան (Համայնքի գծով տնօրեն: Առցանց: Մասնակցել է հարց 1-ին և 2-ին),
Մերի Հովսեփյան (Ակադեմիական տնօրեն: Առկա:),
Սիլվիա Նաջարյան (Հիմնական դպրոցի տնօրեն: Առկա:),
Հայկ Պողոսյանը (Գործառնական տնօրեն: Առկա:),
Գոհար Հովհաննիսյան («Այբ» հիմնադրամի գործադիր տնօրեն, Առկա:),
Իզաբելլա Մանասարյան (Ռեսուրսների ներգրավման և հաղորդակցության տնօրեն: Առկա:):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել: Որոշում՝ հարց 1 *Որոշվեց հաստատել ՀԽ-ի նիստի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի օրակարգը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:
Հարց 3. Ներդրումային ֆոնդի բաշխման քաղաքականության հաստատում:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց.* 1. *Քաղաքականությունը քննարկելու համար փետրվարի սկզբին կազմակերպել ֆինանսաբյուջետային հանձաժողովի բաց հանդիպում մինչ այդ հավաքագրելով ՀԽ-ի անդամների հարցերը ու առաջարկությունները:* 2. *«Այբ» դպրոցի ներդրումային պահուստի ձևավորման և բաշխման քաղաքականությունը ներկայացնել փետրվարի ՀԽ նիստի հաստատմանը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 4. Ընդունելության կարգի փոփոխություն:
Որոշում՝ հարց 4 *Որոշվեց հաստատել «Այբ»դպրոցի ընդունելության կարգի փոփոխությունները ըստ Հավելված 3-ի:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 5. Շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման հաշվետվություն:
Հարց 6. Նոր մասնաշենքի կառուցման համար «Այբ» հիմնադրամի հետ համատեղ պրոյեկտային կոմիտեի ստեղծում:
Որոշում՝ հարց 6 *Որոշվեց նոր ավագ դպրոցի մասնաշենքի կառուցման ծրագրային հանձնաժողով ձևավորելու հառցը դնել առցանց քվեարկության՝ նախօրոք ստանալով առաջարկվող թեկնածուների համաձայնությունը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 7. Կրթավանի զարգացման աշխատանքերի կարգավիճակի հաշվետվություն:
Հարց 8. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն/ 2021 թվականի սեպտեմբերից սկսած:
Որոշում՝ հարց 8 *Որոշվեց Հավելված 6-1-ի 86 կետը համարել հաստատված:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 9. Հաջորդ նիստերի օրվա հաստատում:

Որոշում հարց 9 *Որոշվեց ՀԽ-ի հաջորդ տարվա նիստերը հրավիրել փետրվար 27-ին, մայիսի 8-ին, հուլիսի 10-ին և սեպտեմբերի 25-ին Երևանյան ժամանակով ժամը 18:00-ին:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 10. ԱՄՆ-ի դրամահավաքի արդյունքների ամփոփում:
Կետ 11 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել փետրվարի 27-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 12. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 20:50-ին:

ՀԽ նախագահ

Սարգիս Բադալյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____